ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԵԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Վեդի համայնք
ՀՀ, Արարատի մարզ, ք.Վեդի, Թումանյան փ., շ. 6, Հեռ. +(374)60881111, vedimunicipality@gmail.com

N 4526

27 դեկտեմբեր 2024թ.

«ՓԱԽԱՆՅԱՆ ԸՆԴ ՓԱՐԹՆԵՐՍ» ՍՊԸ-Ի

ՏՆՕՐԵՆ՝ ՀԱՍՄԻԿ ՓԱԽԱՆՅԱՆԻՆ

Ծանուցում

Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

ՀՀ Արարատի մարզի Վեդու համայնքապետարանի /այսուհետ նաև՝ Պատվիրատու/ և «Փախանյան ընդ փարթներս» ՍՊ ընկերության /այսուհետ՝ Կատարող/ միջև 2024 թվականի մարտի 13-ին կնքվել է ծառայությունների մատուցման N ՀՀ-ԱՄՎՀ-ԳՀԽԾՁԲ-24/02 ծածկագրով պայմանագիրը /այսուհետ՝ Պայմանագիր/, որի համաձայն /Պայմանագրի 1.1 կետ/՝ Կատարողը ստանձնել է ՀՀ Արարատի մարզի Վեդու համայնքապետարանի կարիքների համար իրավաբանական խորհրդատվական ծառայության մատուցման պարտավորությունը՝ կնքված պայմանագրի անբաժանների մաս կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների համաձայն, ըստ որի՝ Կատարողը պարտավորվել է մատուցել հետևյալ ծառայությունները՝

- Իրավաբանական խորհրդատվության տրամադրում,
- մարդկային ռեսուրսների կառավարման (անհատական և ներքին իրավական ակտերի նախագծում և սպասարկում) նպաստում,
- իրավական այլ փաստաթղթերի կազմում և սպասարկում, ներառյալ՝ կանոնադրություններ, պայմանագրեր,

ՎԵԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ՄՈՒՏՔԱՅԻՆ ՄԱՍ
ԵԼՄՈՒՏ N Ա-4526
«27» 12 2024թ.

• Պատվիրատուի գործունեության իրավական ռիսկերի գնահատման և դրանց բացառման կամ նվազեցման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում և իրավական կարծիքի տրամադրում, ներառյալ՝ Պատվիրատուի առանձնահատկություններով պայմանավորված գնումների ոլորտում բախվող խնդիրների վերաբերյալ,

• Համայնքի ղեկավարի ցուցումով և լիազորմամբ համայնքի շահերի ներկայացում ՀՀ պետական և ոչ պետական կառույցներում, կազմակերպություններում և քաղաքացիների հետ հարաբերություններում, ներառյալ՝ ՀՀ դատարաններում, ներկայացուցչություն՝ քաղաքացիական, վարչական և քրեական գործերով, ԴԱՀԿ ծառայությունում՝ որպես պահանջատիրող կամ պարտապանի ներկայացուցիչ, (անսահմանափակ Պայմանագրի գործողության ժամկետում դատական գործով)

• բանակցություններում, հանդիպումներում և քննարկումներում վստահորդի իրավաբանական շահերի պաշտպանության նպատակով մասնակցություն,

• վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով հարուցված վարչական վարույթներին մասնակցություն, տալիս է խորհրդատվություն արձանագրությունների, որոշումների նախագծերի կազմման համար, հետևում է վարչական որոշումների կատարմանը, լիազորությունների շրջանակում իրականացնում է վարչարարություն,

• համայնքապետարանի աշխատակազմի համապատասխան բաժիններից ստանում է տեղական հարկերի, վարձավճարների, տեղական տուրքերի և վճարների պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվություններ և ձեռնարկում համապատասխան իրավական գործառույթներ պարտավորությունների կատարումն ապահովելու ուղղությամբ, ներկայացնում՝ հայցադիմումներ, վճարման հանձնարարականներ,

• ըստ կարիքի իրավաբանական խորհրդատվություն է իրականացնելու համայնքի բնակչության հետ, այցելելու է համայնքի տարբեր վարչական տարածքներ իրավախորհրդատվական գործունեություն իրականացնելու համար,

• Համայնքապետարանում ներկայացուցիչը պետք է ներկա լինի շաբաթական առնվազն 3 օր՝ 8-ական ժամով,

• Կատարողը կամ վերջինիս կողմից ներգրաված մասնագետը պետք է ունենա առնվազն 3 տարվա փաստաբանական գործունեության փորձառություն:

Պայմանագրի 2.4 կետի համաձայն՝ Կատարողը պարտավոր է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

Կատարողի կողմից 2024 թվականի նոյեմբեր ամսից սկսած մատուցվել են Պայմանագրի անբաժանելի մաս կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություններ, մասնավորապես՝

1. Թիվ ԵԴ2/6483/02/24 քաղաքացիական գործով 2024 թվականի հոկտեմբերի 7-ին կայացված ***վճռի 3-րդ կետում /պատասխանողի իրավական դիրքորոշումը/ նշվել է, որ Պատասխանող՝ ՀՀ Արարատի մարզի Վեդու համայնքապետարանը հայցադիմումի պատասխան և/կամ որևէ դիրքորոշում չի ներկայացրել, որը հանգեցրել է ներկայացված հայցապահանջների բավարարմանը:***

2. Ընկերության կողմից չի ապահովվում Պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված՝ ***Ընկերության կողմից ներգրավված ներկայացուցիչների՝ շաբաթական 3 օր՝ 8-ական ժամով ներկայությունը Վեդու համայնքապետարանում*** *(առկա են համապատասխան ապացույցներ):*

3. ***Ընկերության կողմից չի ապահովվում համայնքի շահերի պատշաճ ներկայացումը ՀՀ դատարաններում (առկա են համապատասխան ապացույցներ)՝ մասնավորապես, Ընկերության ներկայացուցիչները չեն մասնակցել Արարատի և Վայոց Ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում 09.12.2024 թվականին համապատասխանաբար ժամը 10:00-ին, 10:10-ին նշանակված թիվ ԱՎԴ1/0206/02/23, թիվ ԱՎԴ1/0207/02/23 և 23.12.2024 թվականին ժամը 15:00-ին նշանակված թիվ ՎԴ/1904/05/24 քաղաքացիական գործերով կայացած դատական նիստերին:***

4. **Թիվ ՎԴ/9704/05/24 վարչական, թիվ ԱՎԴ1/0191/02/24 քաղաքացիական, ԱՎԴ1/0159/02/24 քաղաքացիական և թիվ ՎԴ/1904/05/24 քաղաքացիական գործերով սահմանված դատավարական ժամկետներում Ընկերության կողմից չեն ներկայացվել գրավոր դիրքորոշումներ և միջնորդություններ:**

5. **Թիվ ԵԴ2/6483/02/24 քաղաքացիական գործով և թիվ ՎԴ/1748/05/22 վարչական գործով համապատասխանաբար ներկայացված վերաքննիչ և վճռաբեկ բողոքները Դատարանի կողմից վերադարձվել են՝ 15-օրյա և 5-օրյա ժամկետներում սխալները շտկելու և այն կրկին սահմանված ժամկետում ներկայացնելու համար, Ընկերության կողմից այս անգամ ևս անգործություն է դրսևորվել և սահմանված ժամկետներում սխալները չեն շտկվել և բողոքները դատարաններին կրկին չեն ներկայացվել:**

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը»:*

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ *«Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը»:*

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *«Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված»:*

Պայմանագրի 2.1.2 և 2.1.3 ենթակետերի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.2 եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակցույցին չհամապատասխանող ծառայություն, հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանք:

2.1.3 միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ **գտնում ենք, որ Ընկերությունը թույլ է տվել Պայմանագրի էական խախտում, այն է՝ Ընկերության կողմից մատուցված ծառայությունը չի համապատասխանում Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին, իսկ այս հիմքով Պայմանագիրը միակողմանի լուծելու իրավաչափ հնարավորությունը նախատեսված է Պայմանագրի 2.1.3 ենթակետով, ուստի ղեկավարվելով Պայմանագրի նշված դրույթով՝ Վեդու համայնքապետարանը միակողմանի լուծում է Պայմանագիրը:**

Պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կկիրառվեն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Հարգանքով՝ **ԳԱՐԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ**

Կապ. ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏ /ԻՐԱՎԱԽՈՐՀՐԴԱՏՈՒ/՝ Ասյա Մաթևոսյան
+(374)60881111